

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՎԱՐԴԱՆ ՎԵՐԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ը
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Վարդան Վերոյանս, 2019 թվականի սեպտեմբերի 12-ից աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

➤ Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքներին: Ինչի ընթացքում, մասնակցել եմ մի շարք հանրային քննարկումների: Լրացրել եմ նախագծի հիման վրա կազմված ամփոփաթերթը:

➤ Մասնակցել եմ «Քրեական գործերով իրավական օգնության մասին» նախագծի մշակման աշխատանքներին: Լրացրել եմ նախագծի հիման վրա կազմված ամփոփաթերթը:

➤ Կազմել եմ ՀՀ արդարադատության նախարարության կողմից միջազգային կառույցներին ուղարկվող պաշտոնական նամակների նախագծեր:

➤ Մասնակցել եմ ոլորտի խնդիրների առնչությամբ քննարկումների, այդ թվում՝ 21.11.19թ-24.11.19թ Վրաստանում փորձի փոխանակման նպատակով մասնակցել եմ քրեական ենթամշակույթի վերաբերյալ օրենսդրական կարգավորումներին վերաբերող կազմակերպված կոնֆերանսին:

➤ Ուսումնասիրել եմ միջազգային փորձ և ըստ այդմ՝ ներկայացրել եմ ամփոփ տեղեկանքներ և վերլուծություններ մի շարք իրավական հարցերի և հիմնախնդիրների կապակցությամբ, մասնավորապես.

- ազատությունից զրկված անձանց առողջության պահպանում քրեակատարողական հիմնարկներում և բժշկական կազմակերպություններում,
- դատապարտյալների կողմից կատարվող աշխատանքի կազմակերպում և դրա առնչությամբ պատիժը կրելու ռեժիմի փոփոխություններ,
- քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կրթության, աշխատանքի կազմակերպման, քրեակատարողական հիմնարկների այլ գործառույթների մասնավորեցում,
- ազատությունից զրկված անձանց բժշկական սպասարկում և դեղորայքային ապահովվածություն,
- քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հետ սոցիալական, իրավական, հոգեբանական աշխատանքների իրականացում,
- կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից կատարվող ինքնավնասումների, ինքնասպանությունների կանխարգելում, քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի նվազեցում,
- պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման մոդելներ,
 - Պատասխանել եմ հասարակական կազմակերպություններից, պետական մարմիններից ստացված ընթացիկ գրություններին:
 - Պատասխանել եմ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուղարկված գրություններին:
 - Պատասխանել եմ քաղաքացիների (այդ թվում՝ դատապարտյալների և կալանավորված անձանց) կողմից ուղարկված գրություններին:

Հարգանքով՝



Վերոյան Վարդան

12.03.2020 թ.